

**Claude Mutafian, L'Arménie du Levant (XI<sup>e</sup>–XIV<sup>e</sup> siècle),  
2 vol., Paris, Les Belles Lettres, 2012, 734 + 408 p.**

**Կլոդ Մուֆաֆյան, Մերձավոր Արևելքի Հայաստանը  
(ԺԱ–ԺԳ դարեր), հտ. Ա–Բ, Փարիզ, Լե Բել Լետտր, 2012,  
734 + 408 էջ:**

Ֆրանսահայ պատմաբան Կլոդ–Արմեն Մուֆաֆյանը շուրջ քսանհինգ տարի է, որ իր հաստատուն տեղն է գրավել հայագիտության, հատկապես միջնադարյան Կիլիկիայի պատմության հետազոտման ասպարեզում: 1980–ական թվականներից ի վեր այս բնագավառում նա հեղինակել է շուրջ մեկ տասնյակ արժեքավոր ուսումնասիրություններ, իր նպաստը բերելով նաև պատմական քարտեզագրությանը:

Կ. Մուֆաֆյանը հայտնի է որպես XI–XIV դարերի Հայոց պետության պատմության հնուտ գիտակ, և որպես պատմության այդ ժամանակաշրջանի խոշորագույն մասնագետներից մեկը:

Բացի զուտ գիտական բեղուն գործունեությունից Կլոդ Մուֆաֆյանը 1993 թվականից ի վեր Փարիզում, Վատիկանում և եվրոպական այլ կենտրոններում կազմակերպել է Հայոց պատմությանն ու մշակույթին նվիրված շքեղ ցուցահանդեսներ, որոնք լայն հասարակական արձագանք են գտել: Թանգարանային այս գործունեության, ինչպես նաև հյուրեղ ֆրանսերենով շարադրված ու նկարներով համեմված որակյալ հրատարակությունների միջոցով Կլոդ Մուֆաֆյանը մեծ նպաստ է բերել հայոց միջնադարյան պատմությունն ու մշակույթը օտարներին ներկայացնելու ու դրանք մասսայականացնելու գործին: Ավելին, փայլուն տեղյակ լինելով հայագիտության անցյալի ու ներկայի նվաճումներին և դրանք լիարժեք կերպով ներառելով իր մենագրությունների մեջ, Կլոդ Մուֆաֆյանը նաև հայագիտական մտքի յուրատեսակ փոխանցող ու տարածող է դարձել առաջին հերթին ֆրանսախոս գիտական աշխարհում, իսկ վերջինիս միջոցով նաև ավելի լայն հասարակական շրջանակներում:

Կ. Մուֆաֆյանի վերջին մենագրությունը երկհատոր մի շքեղ հրատարակում է, որը լույս տեսավ 2012–ի նոյեմբերին: Տպագրությունն իրականացրել Ֆրանսիայի լավագույն հրատարակչատներից մեկը՝ «Les Belles Lettres»: Սա Մուֆաֆյանի շուրջ քառորդդարյա պրպտումների հանրագումարն է:

Գրքի մեջ, բացի Կիլիկիայից, ներառված է Մեծ Հայքի և գաղութների, մի խոսքով՝ ողջ հայաշխարհի (le Monde Arménien) XI–XIV դդ. քաղաքական, եկեղեցական և մշակութային պատմությունը: Կարելի է ասել, որ մենագրությունն ունի հանրագիտարանային բնույթ, այն շարադրված է

սկզբնաղբյուրների հարուստ տեղեկությունների հիման վրա և հավակնում է պատասխանել դարաշրջանի Հայոց պատմության գրեթե բոլոր հիմնական հարցերին:

Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ Կիլիկյան շրջափուլում հայությունը հայտնվեց մի իրավիճակում, երբ գտնվում էր ոչ թե երկու հզոր ախտյանների միջև (ինչպես եղել էր մինչ այդ դարեր շարունակ) այլ մի խճանկարի մեջ, որտեղ Հայոց պետության շուրջ կային մեծ ու փոքր բազմաթիվ քաղաքական միավորներ և սա ինքնին թելադրում էր ունենալ մի նոր, որակապես տարբեր դիվանագիտություն:

Հենց այդ յուրօրինակ դիվանագիտության նրբություններն ու ներքին ծալքերն է բացահայտում Մութաֆյանը անդրադառնալով Ռուբինյանների, ապա նաև Հեթումյանների բարդ արտաքին քաղաքականությանը, երբ Կիլիկիայի հայկական պետությունը բյուզանդացիների, խաչակիրների, սելջուկ թյուրքերի, արաբների, մոնղոլների, թուրքմենների շրջապատում փորձում էր ոչ միայն գոյատևել, այլև հնարավորության դեպքում, ընդարձակվել ու հզորանալ:

**Ուսումնասիրության առաջին գլուխն անվանված է «Ռուբինյաններն ու Ֆրանկները. Թագավորության ծնունդը (1045–1219)» (48–111):** 11-րդ դարում հայության զանգվածային միգրացիայի յուրահատկությունը բնորոշելու համար հեղինակն օգտագործում է նշանավոր պատմաբան, միջնադարագետ Ալեն Դյուսելիեի ներմուծած «պետական միգրացիա» կամ «պետականության միգրացիա» բառերը (*migration étatique*), որով էլ բացատրվում է չափազանց կարճ ժամկետներում նոր հողերի վրա ազգային կենսունակ պետական միավորումների կազմավորման գործընթացը:

Ուսումնասիրողը Ռուբինյան իշխանության սկզբնավորման ու ձևավորման առաջին քսանամյակին (Ռուբենի և Կոստանդինի օրոք) անդրադառնալուց հետո առանձին ենթագլուխ է հատկացնում Թորոս Ա-ին (1100–1129), որի երկարատև իշխանապետությունը ուշագրավ է մի շարք առումներով: Նախ սա այն շրջանն է երբ կարելի է խոսել կիլիկյան բազմավեկտոր դիվանագիտության մասին (ենթագլուխը կոչվում է «Թորոս Ա-ի դիվանագիտության հաջողությունը»): Բանն այն է որ մերթ զենքով, մերթ հմուտ արտաքին քաղաքականությամբ (այդ թվում նաև ամուսնական կապեր հաստատելով), մերթ խուսանավելով բյուզանդացիների ու ֆրանկների միջև, մերթ նրանցից քաղաքներ ու ամրոցներ խլելով, Թորոսը (եղբոր՝ Լևոնի հետ համատեղ իշխելով) նախ ապահովեց Ռուբինյանների «էջրը» (Մութաֆյանի գործածած բառն է) դեպի Դաշտային Կիլիկիա, գրավելով Անարգաբան (Անագարբա) և այնտեղ հաստատեց Կիլիկյան Հայաստանի առաջին իրական մայրաքաղաքը, ապա հատեց առաջին հայկական դրամը Կիլիկիայում:

Պատժի ենթարկելով Բագրատունի վերջին արքա Գագիկ Բ-ին սպանողներին հայոց իշխանապետը ընդգծեց այդ փառապանծ արքայատոհմի հետ իր ժառանգական կապը, միաժամանակ նա Քեսունի Տղա Վասիլ իշխանին ձերբակալեց ու հանձնեց խաչակիրներին ընդգծելով Ռուբինյանների կարևորությունը հայկական կազմավորումների մեջ: Մութաֆյանի

դիպուկ բնորոշմամբ այդպիսով շեշտվեց, որ Ռուբինյան իշխանությունն է «հայկական համաստեղության» կենտրոնը, այլ կերպ ասած հայկական կենտրոնը հենց Թորոսի ժամանակ փոխադրվեց Եփրատացիքից Կիլիկիա, իսկ Ռուբինյան իշխանապետությունը դարձավ տարածաշրջանային գործոն:

Սլեհը Կ. Մութաֆյանի սիրած պատմական «կերպարներից» է, որը դաշնակցելով Մահմեդական Ասորիքի տիրակալ Նուր ադ-Դին Ջանգիի հետ, դրել էր Կիլիկիայի պետական անկախ քաղաքականության հիմքերը (էջ 83–86):

Ուսումնասիրողը համոզիչ կերպով ցույց է տալիս Սլեհ իշխանի արտաքին քաղաքականության արդյունավետությունը: Հենց Սլեհի օրոք է Դաշտային Կիլիկիան վերջնականապես միացվում Ռուբինյանների տիրույթներին՝ Հայոց իշխանապետությունը դարձնելով տարածաշրջանային լուրջ դերակատար: Հենց նա է մայրաքաղաք դարձնում Միսը, որտեղ սակայն Սլեհի իշխանությունը շատ կարճ է տևում, քանի որ իր գլխավոր դաշնակցի՝ Նուր ադ-Դինի մահից հետո, շատ չանցած, նա ևս սպանվում է իր հակառակորդների կողմից:

Սլեհի սպանությունից (1175 թ.) հետո Կիլիկիայի քաղաքականությունը կտրուկ լատինամետ երանգներ է ստանում (էջ 87), սրվում են փոխհարաբերությունները Իկոնիայի սուլթանության և Այյուբյան Եգիպտոսի հետ:

Կ. Մութաֆյանն ամենուր փորձում է ձգբրտել սկզբնաղբյուրների տեղեկությունները և հարթել գիտական գրականություն մտած թյուրիմացությունները, և ի պատիվ նրա, պետք է ասել, որ բոլոր սկզբնաղբյուրները նորովի վերընթերցված են: «Հայերը և ֆրանկները» գլխի վերջին մասը նվիրված է Լևոն Մեծագործի դարաշրջանին, ուր հեղինակն անդրադառնում է գահի ժառանգման նրբություններին<sup>1</sup>, Լևոնի իշխանության առաջին տարիների փառասիրության դրսևորումներին, դարաշրջանի իրադարձություններին (Երուսաղեմի անկում և Գ խաչակրություն), որոնք իրենց կնիքն են դրել Կիլիկիայի պատմության վրա, ինչ որ իմաստով պայմանավորելով թագադրության<sup>2</sup> և միջազգային ճանաչման խնդիրները:

Թագադրությունից հետո Լևոն Ա<sup>3</sup> թագավորը իր ջանքերն ուղղում է Մերձավոր Արևելքի քրիստոնյա պետությունների (Լատինական, Տրապիզոնի և Նիկիայի կայսրություններ, Վրաստանին ենթակա Ջաքարյան

<sup>1</sup> Այս խնդիրը հեղինակի ուշադրության կենտրոնում է. այդ է պատճառը, որ նա անդրադառնում է Կիլիկիայի գրեթե բոլոր միապետների իշխանության լեգիտիմության դրսևորումներին, հաճախ երկխոսության մեջ մտնելով Լ. Տեր-Պետրոսյանի առաջադրած տեսակետների հետ, երբեմն էլ հակադրվելով դրանց (օրինակ. էջ 214–215, հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ. Բ, Եր., 2007, էջ 408–424 նն.):

<sup>2</sup> Հեղինակն առանձին քննարկում է թագադրության թվականի խնդիրը և հարցի աղբյուրագիտական քննությունից հետո կանգնում է 1198 թ. հունվարի 6-ի վրա (էջ 99–101):

<sup>3</sup> Կ. Մութաֆյանը առանձին վերնագրի («Ինչպես Լևոն Բ-ը դարձավ Լևոն Ա») տակ անդրադառնում է պատմաբաններին հուզող խնդրի բացատրությանը (էջ 97–98), իսկ հետագա շարադրանքում և տոհմաբանական աղյուսակներում տալիս Կիլիկիայի միապետների՝ իր կողմից ձգբրտված, պաշտոնական հերթականությունը (հմմտ. էջ 192, 428–429, Գ 43–45):

իշխանություն) հետ փոխհարաբերությունների զարգացմանը, ակտիվորեն միջամտում Անտիոքի իշխանության ներքին կյանքին և պատերազմում նրա դեմ՝ սեփական իրավունքների պաշտպանության համար: Այդ պայքարում Լևոն Ա-ն իր կողմն է գրավում նույնիսկ Հռոմեական եկեղեցուն, Հռոմեական սրբազան կայսրությանը, Հոսպիտալիերների (Հիվանդախնամ) միաբանությանը (էջ 103): Վերջապես 1216 թ. Լևոն թագավորը հասնում է իր նպատակին, Անտիոքի իշխանության գահին նստեցնելով իրեն ժառանգ հռչակած Ռուբեն-Ռայմոնդին:

Կ. Մութաֆյանը 1216-ին հայկական բանակի կողմից Անտիոքի գրավումը շատ դիպուկ կոչում է «դառն» հաղթանակ, քանի որ անընդհատ պատերազմների այս քաղաքականությունը հավանաբար սպառեց Կիլիկիայի տնտեսական ներուժը և երկիրը չկարողացավ դիմադրել Իկոնիայի սուլթանության նույն տարվա ներխուժմանը, ունեցավ տարածքային կորուստներ, դարձավ վերջինիս հարկատուն: Լևոն Ա-ը նաև հիասթափվեց իր կողմից հովանավորվող Ռուբեն-Ռայմոնդից: Փորձելով հարթել իր պետության ապագան՝ նա բանակցություններ վարեց Հունգարիայի հետ նրանց գահաժառանգի հետ իր դուստր Զարեղին ամուսնացնելու նպատակով: 1219 թ.-ին Լևոն Ա-ի մահով այս պլանները ևս ի չիք դարձան:

ԺԳ դարի առաջին տասնամյակներում Անտիոքին տիրելու համար ծավալված պայքարը ստիպեց երկու հակառակորդներին՝ Լևոն Ա-ին ու Տրիպոլիի կոմս Բոհեմունդ Դ-ին ստեղծել դաշինքներ ու կռալիցիաներ, այդ պայքարի մեջ ներքաշելով այլ պետական ու կրոնական միավորներ: Կ. Մութաֆյանը կարողացել է բացահայտել հակամարտ դաշինքների բարդ կծիկը, աղբյուրների տեղեկությունների համադրմամբ ցույց տալ, թե ինչպես էին կողմերը մեծագույն ջանքեր գործադրում սեփական դաշնակիցներն ավելացնելու կամ հակառակորդի կողմնակիցներին մեկուսացնելու ու թուլացնելու համար:

Մերձավոր Արևելքի բարդ խճանկարի մեջ Կիլիկյան Հայաստանի անվտանգությունն ապահովելու, նոր դաշնակիցներ գտնելու, կամ հակառակորդներին մեկուսացնելու գործում երկրի վերնախավի համար ազդու միջոց էր «ամուսնական դիվանագիտությունը»:

**Երկրորդ գլուխը վերնագրված է «Հեթումյաններ՝ և մոնղոլներ. Թագավորության հզորության գագաթնակետը (1219–1289)» (էջ 112–170):** Լևոնի մահից հետո, շուրջ յոթ տարի կառավարական ճգնաժամը շարունակվում էր երկրում: Կ. Մութաֆյանը ճշտում է գահի ժառանգման համար պայքարի հիմնական փուլերը և նորովի ներկայացնում Հռոմի պապության դերը այդ պայքարում<sup>2</sup> (էջ 115–117):

Կ. Մութաֆյանը լուսաբանում է Իկոնիա-Կիլիկիա միջպետական հակամարտությունների բնույթը (էջ 119), հստակեցնում է Լամբրոնի

<sup>1</sup> Կ. Մութաֆյանը հիմնվելով սկզբնաղբյուրների վրա հավաստում է, որ Հեթումյանները թեպետ շարունակում են դիտվել իբրև Ռուբինյաններ (էջ 118), սակայն աշխատանքում շարունակում է իրավացիորեն օգտագործել Հեթումյան տոհմանունը:

<sup>2</sup> Կ. Մութաֆյանը Ֆիլիպ Անտիոքացու, իսկ հետագայում՝ Գի դը Լուսինյանի սպանության պատճառ է համարում ոչ միայն նրանց լատինամետ կեցվածքը, ինչպես դա ընդունված է հայ պատմագրության մեջ, այլ նաև հայկական կառավարող վերնախավի նկատմամբ նրանց կողմից ցուցաբերած գոռոզամտության դրսևորումները (էջ 116, 213–214):

Հերոմյանների դերն այդ պայքարում (էջ 120), շրջանառության մեջ է դնում հայ-լատին փոխհարաբերությունների վերաբերյալ հայագիտությանն անձանոթ նոր նյութեր (էջ 120):

Այնուհետև հեղինակը ներկայացնում է մոնղոլական պետության ստեղծման պատմությունը, հավատալիքները և լայնածավալ այդ պետության մեջ նեստորական հոգևորականության խաղացած դերը:

Մանագկերտի (1071) և Քյոսե Դաղի (1243) ճակատամարտերի նշանակությունը տարածաշրջանի և համաշխարհային պատմության զարգացումների վրա, կարելի է դնել նույն հարթության վրա: Իրանցից հետո ուժերի դասավորությունը միջազգային ասպարեզում շրջադարձորեն փոխվում է: Եթե առաջինից հետո սելջուկ թյուրքերին անցավ Մերձավոր Արևելքի ճակատագրի տնօրինումը, ապա երկրորդում՝ մոնղոլները կարողացան իրենց ձեռքը վերցնել համաշխարհային տիրապետության լծակները և առևտրական ճանապարհները: 1243 թ. Քյոսե Դաղի ճակատամարտով մոնղոլները տեր դարձան Փոքր Ասիայի մեծ մասին, Կիլիկիայի հայկական թագավորությունը ստիպված էր ձանաչել մոնղոլների գերիշխանությունը:

Հեղինակն արդարև այս իրադարձությունների հետ է կապում 1244 թ. Երուսաղեմի երկրորդ անկումը, որն ազդարարում էր մոնղոլների դեմ ստեղծված՝ մերձավորարևելյան մուսուլմանական պետությունների նոր դաշինքի մասին (էջ 135), որի մի կողմում հայտնվել էին մոնղոլները և իրենց նվաճած, սակայն դեռևս ինքնիշխան՝ Վրաստանի և Կիլիկիայի հայոց քրիստոնյա պետությունները, իսկ մյուս կողմում՝ Իկոնիան, Կարամաններն ու Մերձավոր Արևելքի Այյուբյան պետությունները: Գույուկ խանի թագադրման արարողության ժամանակներում (1246 թ. օգոստոս) նվերներով խանին և նրա արքանյակներին այցելության էին շտապում տարածաշրջանի (Վրաստանի, Իկոնիայի ևն.) և եվրոպական պետությունների (Հռոմի պապություն, Ֆրանսիա ևն.) ներկայացուցիչներ:

Կիլիկյան Հայաստանի նկատմամբ մոնղոլների ծրագրերը ձշտելու առաքելությամբ խաների մայրաքաղաք է ձանապարհորդում նաև Հերոմ թագավորի եղբայր Սմբատը, որը հեղինակի հաշվումներով Կարակորում պետք է հասած լինի 1247 թ. վերջին կամ 1248 թ. սկզբին, այսինքն՝ Գույուկի թագադրումից գրեթե մեկ տարի անց (էջ 136-139): Վերջինիս դեսպանագնացության արդյունքներից էր Կիլիկիայի նկատմամբ մոնղոլների գերիշխանության ձանաչումն ու մոնղոլների հետ համագործակցության ապահովումը, որն հաստատելու համար Սմբատն ամուսնացավ Կարակորումի արքունիքի իշխանադստրերից մեկի հետ (G 33): Հեղինակը փորձում է պարզել թե Գույուկի թագադրության արարողությանը ներկա հյուրերից ու՞մ նկատի ունի Ջուվեյնին, անվանելով «le soul-tan de takvor» (էջ 137, տ. 5, 15): Կ. Մութաֆյանը ենթադրում է, որ այստեղ խոսքը հավանաբար Զաքարյան Ավագի մասին է:

1252 թ. նոր խան Մոնկայի (Մանգու) արքունիք է շտապում Հերոմ թագավորը (էջ 139-143): Երկու եղբայրներն (թե՛ Սմբատը, և թե՛ Հերոմը) էլ ծպտված, Կարակորում են շտապել տարբեր ձանապարհներով (C 27), որի ընթացքում հանդիպումներ էին ունենում մոնղոլ բարձրաստիճան

պաշտոնյաների և նրանց իշխանությունը ճանաչած հայ իշխանների հետ: Կ. Մութաֆյանը անդրադառնում է 1254 թ. կնքված հայ-մոնղոլական պայմանագրին և Մեծ Հայքում մոնղոլների վարած դաժան քաղաքականությանը, Իլխանության ստեղծմանն ու մինչև 1260 թ. Հուլաղուի վարած հաղթական պատերազմներին, այդ թվում և Բաղդադի գրավմանը (էջ 140–147): Մոնղոլների և մամլուքների հակամարտության (1260–1270 թթ.) ֆոնի վրա հեղինակն անդրադառնում է Ասորիքի և Պաղեստինի ռազմական գործողություններին, Կիլիկիայի և Անտիոքի տարածքային ձեռքբերումներին, 1260 թ. մոնղոլական բանակի՝ Այն Ջալութում կրած պարտությանը, միջազգային դիվանագիտական պայքարի սրությանը<sup>1</sup>, Հեթումյանների երկու ձյուղերի (Լամբրոնի և Պապերոնի) ներքին հակամարտությանը, Կարաման-մամլուքյան դաշինքին, 1266 թ. մամլուքների ռազմարշավին դեպի Կիլիկիա և դրա հետևանքներին (էջ 148–160): Հեղինակը մանրամասն անդրադառնում է Լևոն Բ թագավորի քաղաքականությանը (էջ 160–170), մասնակի հաջողություններին և մամլուքների հետ կնքած պայմանագրերին:

**Աշխատանքի երրորդ գլուխը՝ «Հեթումյաններ և մամլուքներ. թագավորության հոգեվարքը (1289–1375 թթ.)» (էջ 171–224)** նվիրված է թագավորության վերջին շրջանին: Քննելով սկզբնաղբյուրների վկայությունները, հեղինակը ձշտում է Լևոն Բ-ի ընտանիքի անդամների ձշգրիտ թիվը, նկարագրում է Ասորիքում խաչակրաց վերջին ամրությունների, ինչպես նաև կաթողիկոսների նստավայր Հռոմկլայի անկումը (1293 թ.), անդրադառնում է մոնղոլական Ղազան խանի որդեգրած հակաքրիստոնեական քաղաքականությանը, 1298 թ. մամլուքների Կիլիկիայի դեմ սանձազերծած նոր պատերազմին, Հոմսում՝ մոնղոլների և քրիստոնյաների միասնական բանակի վերջին հաղթանակին (1299 թ.), քննում է Հայոց թագավորի Երուսաղեմ մտնելու խնդրահարույց հարցը (էջ 179–180):

Ապա հետազոտողը անդրադառնում է Ղազան խանի կյանքի վերջին տարիներին ձեռնարկված ռազմարշավներին (1300 և 1303 թթ.), Օլջայթու խանի (1304–1316) դիվանագիտական ձեռնարկներին, Այսրկովկասի քրիստոնյաների նկատմամբ իրականացված աննախադեպ հալածանքներին, որոնք ավելի խստացան Աբու Սաիդի (1317–1335) խանության և նրա մահից հետո սկսված անիշխանության տարիներին:

Ներկայացնելով Իլխանության անկման գործընթացը, Մութաֆյանը վերադառնում է Կիլիկյան Հայաստանի պատմության խնդիրներին. պապական արքունիքի հետ ԺԳ դարի վերջի փոխհարաբերություններին, նոր խաչակրությունների ծրագրերին (էջ 188), Հեթում Բ ֆրանցիսկյան վանականի դավանական և պետական քաղաքականությանը (էջ 188–194), նրա եղբայրներ Թորոսի, Սմբատի, Կոստանդինի, ինչպես նաև Լևոն Գ-ի իշխանության բնույթին, 1307 թ. Փիլարդուի կողմից Հեթում Բ-ի և Լևոն Գ-ի սպանությանը, Օշին թագավորի և նրա կանանց ծագումնաբանությանը (էջ 195–196): Կ. Մութաֆյանն անդրադառնում է 1306–1322 թթ. հայկիպրական քաղաքական և ամուսնական փոխհարաբերություններին (էջ

<sup>1</sup> Այդ մասին վկայում է նաև Միխիթար Սկևռացու «Յաղագս համապատուութեան երկուտասան առաքելոց երկը». – Գանձասար, Եր., 1994, էջ 137–157; Զ, Եր., 1996, էջ 403–420:

196–199), հակամարտությանը, նրանց և Հռոմեական եկեղեցու ծրագրերին:

Ուսումնասիրողը մանրամասնորեն քննարկում է 1307–1342 թթ. Կիլիկիայի և Արևմուտքի պետությունների քաղաքական ծրագրերը և փոխհարաբերությունները (էջ 200–209), խաչակրաց նոր ռազմարշավների պլանները, Լևոն Դ-ի (1321–1341) և պալլ Օշին Կոռիկոսցու գործունեությունը, 1323 թ. Այասի ավարառությունը և մամլուքների հետ կնքված նոր պայմանագիրը: Ճշտում է Հեթում Նդրեցու դեսպանագնացությունների և Կոնստանս Արագոնցու հետ Լևոն Դ-ի ամուսնության թվականները: Անդրադառնում է 1335 և 1137 թթ. մամլուքների նոր ռազմարշավներին և Հռոմեական եկեղեցու միջոցառումներին:

Արժեքավոր են հեղինակի դիտարկումները Կիլիկիայի թագավորության վերջին ժամանակաշրջանի վերաբերյալ (էջ 210–224), ուր հեղինակն անդրադառնում է Կիլիկիայի թագավորական իշխանության անցմանը Լուսինյան հարստության պայագատներին, Գի Լուսինյանի կարիերային Բյուզանդիայում, մամլուքների և եվրոպական իշխողների հետ նրա փոխհարաբերություններին, ասպետական գրականության մեջ նրա հիշատակությանը, հայ պատմագրության մեջ Կոստանդին և Գի անունների շփոթին (էջ 214–215): Կ. Մութաֆյանը ներկայացնում է Կոստանդին Ա-ի և Կոստանդին Բ-ի կառավարման ժամանակաշրջանը (1344–1363, 1364–1373), անդրադառնում՝ Պետրոս Ա Կիպրացու հավակնություններին, Մարի Կոռիկոսցու գործունեությանը և Լևոն Ե-ի թագավորությանը, ձերբակալությանն ու արքային՝ դեպի եվրոպական տարբեր երկրներ կատարած նրա ուխտագնացություններին, կյանքի վերջին տարիներին, Կիլիկիայի հետագա ճակատագրին:

Գրքի 226-րդ էջից հետո սկսվում է 500 էջանոց մի ծավալուն հանրագիտարան: Եթե նախորդ՝ Կիլիկիայի քաղաքական պատմությանն ու դիվանագիտությանը նվիրված բաժինը Մութաֆյանի դոկտորական ատենախոսության և նախկինում հրատարակած մի ամբողջ շարք հետազոտությունների լրացված, հարստացված ու վերանայված տարբերակն է, ապա այս բաժինը իր ընդգրկած ժամանակահատվածով և ուսումնասիրության նյութով բոլորովին նորություն է ֆրանսահայ պատմաբանի գիտական կենսագրության մեջ: Նշված «հանրագիտարանը» բաժանվում է ինը մեծ գլուխների, որոնք են՝ Մեծ Հայքի դինաստիաներն ու պետությունները (5–12-րդ դդ.), Զաքարյան Հայաստանի իշխանությունները (12–14-րդ դդ.), Տոհմերը Հայոց թագավորության մեջ (12–14-րդ դդ.), Ամուսնական դիվանագիտությունը, Պետական-վարչական մարմինները, Արտաքին հարաբերությունները, Կրոնական հաստատությունները, Կրոնական դիվանագիտությունը և Մշակութային կենտրոնները:

Անդրադառնալով քաղաքական, եկեղեցական և այլ բնույթի հարաբերություններին, Կլոդ Մութաֆյանը մի առանձին գլուխ է հատկացնում «ամուսնական դիվանագիտությանը», որը նորույթ է ոչ միայն Կիլիկիայի, այլև ընդհանրապես Հայոց պատմության ուսումնասիրության ասպարեզում:

Հեղինակը ոչ միայն նոր փաստեր է ի հայտ բերում և կատարում է բազմաթիվ ձգարտումներ, այլև ցույց է տալիս ամուսնական կապերի

քաղաքական նպատակները, առավելագույնս բացահայտելով առանձին անհատների մարդկային առանձնահատկությունները:

Մութաֆյանի ներկա աշխատանքի մի կարևոր առանձնահատկությունն է այն, որ նա ըստ էության Կիլիկիան չի առանձնացնում Մեծ Հայքից ու թերևս նախորդ ուսումնասիրողներից ավելի ընդգծում է «մեծ հայաշխարհի» ոչ միայն լեզվամշակութային ու կրոնական, այլև որոշ դեպքերում նաև քաղաքական մերձավորությունը: Այս առումով լիովին բացատրելի են բազմաթիվ ակնարկները 4–11-րդ դարերի պատմությանը, այդ շրջանում գոյություն ունեցած թագավորությունների, իշխանությունների ու նախարարական տների մասին բավական մանրամասն տեղեկությունների հաղորդումը:

Ուսումնասիրության երկրորդ հատորում ներկայացված են օժանդակ նյութեր, այդ թվում և տոհմաբանական ցանկեր, որոնք վերաբերում են Բագրատունիներին, Արծրունիներին, Սյունիքի և Արցախի իշխանական տներին, Պահլավունիներին, Թոռնիկյաններին, Զաքարյաններին, Վաչուտյաններին, Պոռոշյաններին, Դովչյաններին, Սեֆեդիյաններին, Ռուբինյաններին, Հեթումյաններին, Թոռնիկյաններին, Լուսինյաններին, Շտաուֆեններին, Խաչակրաց պետությունների ղեկավարներին, Բյուզանդական կայսրերին, Վրաց Բագրատունիներին, Շաղդադյաններին, Իկոնիայի սուլթաններին, մոնղոլ խաներին, և հատկապես հայ և այլազգի իշխանական ընտանիքների ամուսնական կապերին:

«Մերձավոր Արևելքի Հայաստանը (ԺԱ–ԺԴ դարեր)» երկհատոր ուսումնասիրության կարևոր արժանիքներից է այն, որ գրված է աղբյուրների քննական վերընթերցման և Հայոց պատմության իրադարձությունների համակողմանի քննության հենքի վրա: Մի այլ կարևոր հանգամանք է այն, որ նյութը շարադրված է ոչ միայն պատմական երկերի և ուսումնասիրությունների հիման վրա, այլև լայնորեն օգտագործված են բոլոր հնարավոր աղբյուրները, այդ թվում վիմագիր արձանագրությունները, դրամագիտական տվյալները, կնիքները և այլն: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում պատմական դեմքերի հոգեբանական առանձնահատկություններին, ամուսնական կյանքին, առօրյային: Այս ամենը, ինչպես նաև ծավալուն նյութի բաժանումը բազմաթիվ փոքր և դյուրընթեռնելի ենթագլուխների, հատորների ընթերցումը դարձնում է աշխույժ և հետաքրքիր:

**Ազատ Բոգոյան**  
**Վահան Տեր-Ղևոնդյան**



**Claude Mutafian, L'Arménie du Levant (XI<sup>e</sup>–XIV<sup>e</sup> siècle),  
2 vol., Paris, Les Belles Lettres, 2012, 734 + 408 p.**

Клод–Армен Мутафян уже на протяжении 25 лет занимает определенное место в арменоведении, в частности, в области исследования истории средневековой Киликии. Мутафян известен как один из крупнейших специалистов в области истории армянской государственности XI–XIV веков, а также истории данной эпохи.

Кроме плодотворной научной деятельности, Клод Мутафян с 1993 года организует выставки, посвященные армянской истории и культуре. Организацией выставок и выпусков соответствующих изданий на французском языке с иллюстрациями, Клод Мутафян привнес значительный вклад в дело ознакомления европейцев с армянской средневековой историей и культурой.

Обладая обширными знаниями, в области истории, в том числе прошлых и нынешних достижений арменоведения и в полном объеме представляя их в своих монографиях, Клод Мутафян стал также своеобразным распространителем арменоведческой мысли, в первую очередь, в среде франкоговорящих представителей ученого мира.

Последняя монография Мутафяна – великолепный двухтомник, вышедший в свет в ноябре 2012. Данное издание, итог четвертьвековой кропотливой работы Мутафяна, осуществил один из лучших печатных домов Франции – издательство «Les Belles Lettres».

В книге, кроме Киликии, представлена история Великой Армении и армянских общин, одним словом, политическая, церковная и культурная история Армении (*le Monde Arménien*) с XI по XIV век. Можно сказать, что монография имеет энциклопедический охват, основана на обширном материале, опирающемся на первоисточники и отвечает на основные вопросы армянской истории этого времени.

Автор справедливо подмечает, что в Киликии армянство оказалось уже не между двумя могущественными противоборствующими сторонами (как это было на протяжении веков), а в ситуации, когда вокруг армянского государства появились многочисленные большие и малые политические образования, и этот факт сам по себе требовал уже принципиально новой дипломатии.

Мутафян анализирует и объясняет именно эти тонкости дипломатии и внутренние проблемы, обращаясь также к сложной внешней политике Рубинянов, и Хетумянов, когда армянское киликийское государство в окружении византийцев, крестоносцев, турок–сельджуков, арабов, монголов, туркменов стремилось не только уцелеть, но и по возможности расширить границы, и стать сильнее.

**Первая глава исследования озаглавлена “Рубиняны и франки – начало царствования (1045–1219)” (48–111).** Автор использует термин “государственная миграция” (*migration étatique*), заимствованный у известного историка, медиевиста, Алена Дюселье для характеристики

особенностей армянской массовой миграции в XI веке, чем и объясняется создание в сопредельных регионах в кратчайшие сроки жизнеспособных государственных образований.

Рассмотрев начальный 20-летний этап становления правления Рубинянов (Рубена и Константина), исследователь посвящает отдельный раздел Торосу I (1100–1129), длительное пребывание которого на престоле было во многом примечательно. Именно этот период правления отмечен многочисленными достижениями киликийской дипломатии (подраздел озаглавлен “Успехи дипломатии Тороса I”). Лавируя между византийцами и франками, Торос, правивший в тандеме с братом Левоном, обеспечил “выход” (Мутафян использует именно это слово) на Равнинную Киликию, занял Анарзабу, где и основал первую киликийскую столицу и стал чеканить первую армянскую монету.

Наказав убийц Гагика II – последнего правителя рода Багратидов, Торос I подтвердил свою наследственную связь с этим доблестным царским родом. По меткому определению Мутафяна, княжество Рубинянов – центр “армянской государственности”, иными словами, во время правления Тороса центр армянской жизни переместился из долины Евфрата в Киликию, а княжеству Рубинянов принадлежала главная роль в армянской государственности.

Любимый исторический “персонаж” К. Мутафяна – Млех, в союзе с правителем Сирии – Нур ад-Дином Занги, заложил фундамент независимой государственной политики Киликии (стр. 83–86). Исследователь достаточно убедительно показывает продуктивность внешней политики князя Млеха. Именно во время правления Млеха Равнинная Киликия окончательно присоединяется к владениям Рубинянов, что превращало армянское княжество в серьезного соперника в регионе. Млех делает Сис столицей, но правит он недолго, вскоре после смерти своего основного союзника – Нур ад-Дина Занги, Млех, был убит противниками.

После убийства Млеха (1175 г.), политика Киликии приобретает про-латинскую ориентацию (стр. 87), в результате обостряются взаимоотношения с султанатом Иконии и аюбийским Египтом.

К. Мутафян стремится уточнить информацию первоисточников, выявляя вошедшие в научные труды заблуждения. Последняя часть главы “Армяне и франки” посвящена эпохе правления Левона Мецагорца, где автор обращается к нюансам престолонаследования<sup>1</sup>, к честолюбивым устремлениям Левона в первые годы его правления, к событиям эпохи (падение Иерусалима и III крестовый поход), которые наложили свой отпечаток на историю Киликии.

После коронации, Левон I<sup>2</sup> направляет все усилия на развитие взаимоот-

<sup>1</sup> По этой причине он обращается к вопросу легитимности власти почти всех Киликийских монархов, часто вступая в полемику (см. например стр. 214–215, ср. L. Տեր-Պետրոսյանի, Խոչափիրները և հալերը, հս. Բ, Եր., 2007, էջ 408–424 նւ.):

<sup>2</sup> У Мутафяна под отдельным заголовком («Как Левон II стал Левоном I») идет объяснение проблемы, волнующей историков (стр. 97–98). В последующем повествовании он дает уточненный им должностной генеалогический перечень правителей Киликии (ср. стр. 192,

ношений с христианскими государствами Ближнего Востока (Латинской, Трабзонской и Никейской империями, с подвластным Грузии княжеством Закариянов), принимает активное участие во внутривосточной жизни княжества Антиохии и ведет войну против него, тем самым выступая на страже государственных интересов. В этой борьбе Левон I привлекает на свою сторону даже Римскую церковь, Священную Римскую империю и Орден Госпитальеров (стр. 103). В конце концов, в 1216 году Левону удается добиться намеченной цели – посадить на трон Антиохийского княжества своего ставленника Рубена-Раймонда.

Захват Антиохии в 1216 году К. Мутафян чрезвычайно точно называет “горькой” победой, поскольку политика бесконечных войн истощила экономическую мощь Киликии, страна не смогла защититься от вторжения в тот же год Иконийского султаната и, потеряв при этом территории, стала данником последнего. Левон I разочаровался также в своем ставленнике Рубене-Раймонде. Пытаясь обеспечить будущее государства, он вел переговоры с наследником Венгерского престола, с целью заключения брака последнего со своей дочерью Забел. Но, со смертью Левона I в 1219 году, этим планам не суждено было сбыться.

Разразившаяся в первые десятилетия XIII века борьба за право владения Антиохией заставила двух противников – Левона I и графа Триполи Боэмунда IV, обратиться к созданию союзов и коалиций. К. Мутафяну удалось объяснить сложные взаимоотношения противоборствующих союзов, и на основании источников показать, какие титанические усилия прилагали обе стороны для привлечения на свою сторону союзников или для ослабления и ликвидации союзников противника.

Для аристократии страны “брачная дипломатия” стала средством в деле поиска новых союзников и обеспечения безопасности Киликийской Армении в сложной ситуации Ближнего Востока.

**Вторая глава называется “Хетумяны и монголы: апогей царской мощи (1219–1289)” (стр. 112–170).** После смерти Левона, в стране около семи лет продолжался кризис власти. К. Мутафян уточняет основные этапы борьбы за престол и в новом свете представляет роль Римского папства в данном вопросе<sup>1</sup> (стр. 115–117).

К. Мутафян объясняет суть межгосударственных противостояний Иконии и Киликии (стр. 119), определяет роль Хетумянов Ламброна в этой борьбе (стр. 120), предлагает новый исторический материал, ранее не известный арменоведцам, касающийся армяно-латинских отношений (стр. 120).

Далее автор представляет историю формирования монгольского государства, и масштабную роль несторианского духовенства в жизни этого государства.

---

428–429, с 43–45).

<sup>1</sup> К. Мутафян считает, что причиной убийства Филиппа Антиохийского, а затем и Ги де Лусиньяна стала не только их латинская ориентация, но также и проявление высокомерия по отношению к представителям армянской аристократии (стр. 116, 213–214).

Автор с особым вниманием исследует сражения при Маназкерт (1071) и Кесе–Даге (1243). После Маназкертского сражения к туркам–сельджукам переходит управление Ближним Востоком. В 1243 году, после сражения при Кесе–Даге к монголам переходит основная часть Малой Азии, рычаги мирового господства и доступ к торговым путям, а Армянское Киликийское царство вынуждено было признать превосходство последних.

Падение Иерусалима в 1244 году возвестило создание нового союза ближневосточных мусульманских государств против монголов (стр. 135), куда вошли с одной стороны монголы и христианские государства, а именно – Грузия и Киликия, а с другой – Икония, Караманы и Аюбийские государства.

Для прояснения ситуации, связанной с политикой монголов относительно Киликийской Армении, в столицу к ханам отправляется Смбат – брат царя Хетума, который, по мнению автора, должен был добратся до Каракорума в конце 1247 – начале 1248 года, то есть спустя почти год после коронации Гуюк–хана (стр. 136–139). Было достигнуто решение о сотрудничестве. Автор пытается понять, кого же из гостей, присутствующих на церемонии коронации, имеет в виду Джувейн, называя его “Царь–султан” (le soultan de takvor) (стр. 137, том 5, 15). К. Мутафян предполагает, что речь, по–видимому, идет об Аваге Закаряне.

В 1252 году во дворец к новому хану Монка (Мангу) направляется Хетум (стр. 139–143). К. Мутафян обращается к подписанному в 1254 году армяно–монгольскому договору и к завоеванию Багдада (стр. 140–147). На фоне противоборства монголов и мамлюков (1260–1270 гг.), автор обращается к военной обстановке в Сирии и Палестине, территориальным приобретениям Киликии и Антиохии, поражению монгольской армии при Айн Джалуте в 1260 году, обострению дипломатических отношений на международной арене, к внутренним противоречиям между двумя ветвями рода Хетумянов (Ламброна и Паперона), союзу между Караманами и мамлюками, военному походу мамлюков на Киликию в 1266 году и его последствиям (стр. 148–160). Автор детально обращается также и к политике царя Левона II (стр. 160–170), к его частичным успехам и к подписанным с его помощью соглашениям с мамлюками.

**Третья глава данного труда посвящена теме “Хетумяны и мамлюки: агония царства (1289–1375 гг.)” (стр. 171–224).** В ней описывается последний период Киликийского царства. Автор описывает захваченные крестоносцами последние укрепления в Сирии, падение крепости Ромкла (1293 г.) и пленение католикоса. Обращается к проводимой Казан–ханом антихристианской политике, развязанной в 1298 году мамлюками войне против Киликии, последней победе монголов и христиан при Хомсе (1299 г.), исследует спорный вопрос о вступлении в Иерусалим армянского царя (стр. 179–180). Далее исследователь обращается к военным походам Казан–хана, предпринятым в последние годы жизни (1300 и 1303 гг.), к дипломатии Олджайту–хана (1304–1316), беспрецедентным гонениям на христиан Закавказья, обострившимся во время правления Абу Саида (1317–1335).

К. Мутафян обращается к взаимоотношениям с Папским двором в конце XIII века и новым планам, относительно крестовых походов (стр. 188). Исследователь детально обсуждает политические программы и взаимоотношения Киликии с государствами Запада в период с 1307–1342 годы (стр. 200–209), планы, связанные с новыми крестовыми походами, деятельность Левона IV (1321–1341) и князя Ошина Корикосского, захват трофеев в Айасе в 1323 году и подписанный с мамлюками новый договор. Уточняет дату дипломатической миссии Хетума Нгреци и год вступления в брак Левона IV и Констанции Арагонской. Обращается к новым военным походам мамлюков в 1335 и 1337 годы и событиям, связанным с Римской церковью.

Ценными представляются наблюдения автора о последнем периоде Киликийского царства (стр. 210–224), где речь идет о переходе власти к богатым наследникам Лусинянов, карьере Ги Лусиняна в Византии, о его взаимоотношениях с мамлюками и правителями Европы (стр. 214–215). К. Мутафян обращается к периодам правления Константина I и Константина II (1344–1363, 1364–1373), притязаниям Петроса I Кипрского, деятельности Марии Корикосской и правлению Левона V, его отстранению от власти и изгнанию. Повествует о паломничестве изгнанника в различные европейские страны, о последних годах его жизни.

С 226 страницы книги начинается раздел объемистой “энциклопедии” в 500 страниц. Если предыдущий раздел, посвященный политической истории и дипломатии Киликии, является аннотацией к докторской диссертации Мутафяна и опубликованной ранее целой серии дополненных и пересмотренных исследований, то данный раздел по своей последовательности и предмету исследования является абсолютно новым в научной биографии К. Мутафяна. Данная “энциклопедия” состоит из девяти глав – Династии и государства Великой Армении (5–12 вв.), Власть рода Закарян Армении (12–14 вв.), Родословная династий в истории Армянского царства (12–14 вв.), Брачная дипломатия, Государственно-административные органы власти, Внешние отношения, Религиозные учреждения, Религиозная дипломатия и Культурные центры.

Обращаясь к политическим, церковным и иного рода отношениям, Клод Мутафян посвящает отдельную главу “брачной дипломатии”, что является совершенно новым подходом в плане изучения истории не только Киликии, но и общей истории Армении.

Автор не только приводит новые факты и вносит многочисленные уточнения, но и указывает на политические цели брачных связей, раскрывает черты характера отдельных личностей.

Во втором томе автор представляет дополнительный материал, в том числе и генеалогические древа династий – Багратидов, Арцруни, княжеских домов Сюника и Арцаха, Пахлавун, Торникянов, Закарян, Вачутянов, Прошянов, Допнянов, Сефевидянов, Рубинянов, Хетумянов, Лусинянов, Штауфенеров. Указывается также и генеалогический перечень правителей государств – участников крестовых походов, императоров Византии,

грузинских Багратидов, Шададянов, султанов Иконии, монгольских ханов и, в частности, брачных связей между армянскими и иноземными княжескими домами.

Важным достоинством двухтомного исследования “Ближневосточная Армения (XI–XIV века)” является то, что оно написано на основе исторических сочинений и исследований, в нем использованы всевозможные источники в широком смысле слова, такие как наскальные памятники, нумизматические данные, печати и т.д. Автор с особым вниманием относится к чертам характера отдельных исторических персонажей, психологическим особенностям и повседневности. Все это, как и деление обширного материала на небольшие и легко воспринимаемые подразделы, делает чтение томов приятным и увлекательным.

***Азат Бозоян  
Ваан Тер-Гевондян***